

Խմբային վարժություն

Դուք սոցիալական ձեռնարկատիրական գաղափարի մշակման թիմի անդամ եք: Ձեզ հանձնարարված է թիրախային խմբի նախնական ուսումնասիրություն կատարել հետևյալ բիզնես գաղափարների համար:

Թիմ Ա. Գրախանութ, որտեղ գործում է նաև դիզայներական, տպագրության ծառայություններ:

Թիմ Բ. Մարդկային ռեսուրսներով զբաղվող ընկերություն, որը ՀԿ-ների, բիզնեսի խորհրդատվական ծառայություններ է մատուցում, մարդկային ռեսուրսների պլանավորման և կառավարման, մոտիվացման խորհրդատվություն առաջարկում:

Թիմ Գ. Կոնֆերանսների/հանդիպումների անցկացման վայր ունեք Երևանի կենտրոնում, առաջարկվում է նաև տեխնիկական հարցերի և կոնֆերանսների կազմակերպման ծառայություններ:

Նկարագրեք ձեր ապրանքը/ծառայությունը:

1. Ի՞նչ եք առաջարկում:
2. Ինչո՞վ է այն յուրահատուկ:
3. Ձեր գործունեությամբ արդյոք որևէ առկա, իրական պահանջարկ/կարիք/խնդիր եք լուծում:
4. Ի՞նչ առկա ապրանքի/ծառայության հետ եք մրցելու:

Նկարագրեք ձեր թիրախային խմբին/նորդին:

1. Ո՞վ է ձեր թիրախային հաճախորդը:
2. Որո՞նք են նրանց դեմոգրաֆիկ առանձնահատկությունները (տարիքը, սեռը, գտնվելու վայրը, եկամուտը եւ այլն):
3. Որո՞նք են նրանց հոգեբանական, մտածելակերպի առանձնահատկությունները (վերաբերմունքը, հետաքրքրությունները, ապրելակերպը եւ այլն):
4. Ի՞նչ են նրանք ակնկալում, ուզում, կարևոր համարում (հարմարավետություն, անվտանգություն եւ այլն):
5. Ի՞նչ արժեք կարող եք ստեղծել, առաջարկել ձեր հաճախորդներին:
6. Ինչպե՞ս են հաճախորդները որևէ ապրանքի կամ ծառայության ձեռք բերման որոշումներ կայացնում:
7. Ի՞նչ գին են նրանք պատրաստ վճարել:
8. Ի՞նչ գին կարող են վճարել:
9. Ինչու՞ պետք է հաճախորդները ձեր ապրանքը/ծառայությունը ընտրեն: